TRANSLATION (original in English)

Հայաստանի Հանրապետության վարչապետ
Պարոն Նիկոլ Փաշինյանին
Կառավարական տուն թիվ 1
0010 Երևան
Հայաստանի Հանրապետություն

Հունիսի 1, 2023 թ

«Խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն, երբ խաղաղություն չկա» (Երեմիա 6:14)

«Խաղաղության պատրվակով… նոր ցեղասպանություն և հայրենազրկում» (Գերագույն Հոգևոր Խորհուրդ, Հայ Առաքելական Եկեղեցի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 23 մայիսի, 2023 թ.)

Հարգելի պարոն վարչապետ,

Միջազգային քրիստոնեական համերաշխության կազմակերպության աջակիցներն ամբողջ աշխարհում կիսում են Արցախի (Լեռնային Ղարաբաղ) մոտ 120 հազար հայ քրիստոնյաների խորը անհանգստությունը՝ կապված Ձեր կողմից հրապարակայնորեն հայտարարված պատրաստակամության հետ՝ որպես փոքրամասնություն իրենց իրավունքների վերաբերյալ Ստեփանակերտի և Բաքվի միջև երկխոսության չճշգրտված երաշխիքների դիմաց Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագրով Ադրբեջանի ինքնիշխանությունն իրենց և իրենց հողերի նկատմամբ ճանաչելու մասին:

Մեր անհանգստությունը խորանում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի վերաբերյալ՝ Ձեր համաժամանակյա լռությամբ: Այդ իրավունքն արտահայտված է 2007թ. ԵԱՀԿ Մադրիդյան սկզբունքներում և 2008թ. նոյեմբերի 2-ին Ադրբեջանի և Հայաստանի նախագահներ Իլհամ Ալիևի և Սերժ Սարգսյանի համատեղ հայտարարության մեջ: Երկու նախագահները հայտարարել են.

«Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով, որը ԼՂ բնակչությանը ընձեռում է կամքի ազատ և իրական արտահայտում»:

Ձեր միակողմանի զիջումից հետո Ադրբեջանի ծայրահեղ ազգայնական բռնապետը անցակետ է տեղադրել Լաչինի միջանցքում և վերսկսել բռնության սպառնալիքները ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլև հենց Հայաստանի Հանրապետության դեմ:

Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ՝ Հայ Առաքելական Եկեղեցու Գերագույն Հոգևոր խորհուրդը դատապարտելի և անընդունելի է համարում խաղաղության պատրվակով «հիմնավորվող» միակողմանի զիջումները, Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի ինքնիշխանության կամայական ընդունումը՝ համոզված

Christian Solidarity International (CSI)
International Headquarters, Zelglistrasse 64, 8122 Binz, ZH, Switzerland

լինելով, որ դա «Արցախի (Լեռնային Ղարաբաղի) մեր քույրերին ու եղբայրներին անխուսափելիորեն կկանգնեցնեն նոր ցեղասպանության և հայրենազրկման առջև»:

Հաշվի առնելով Ադրբեջանի կողմից նախկինում և ներկայումս ուժի կիրառումը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի և Հայաստանի Հանրապետության հանդեպ, ներառյալ հակահայկական հակաքրիստոնեական լայնածավալ էթնիկ/կրոնական զտումները և 19-րդ դարի վերջից ի վեր ցեղասպանական գործընթացը, Հայ Առաքելական Եկեղեցու ղեկավարության դիրքորոշումը կրում է մարգարեական իսկության կնիքը:

Միջազգային քրիստոնեական համերաշխությունը կոչ է անում Ձեզ՝ վերահաստատել Հայաստանի Հանրապետության հանձնառությունը՝ աշխատելու Մադրիդյան սկզբունքների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի իրացման ուղղությամբ, և վերահաստատել նախագահ Ս. Սարգսյանի հանձնարարականը Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը՝ ԵԱՀԿ-ի շրջանակներում հասնելու Ադրբեջանի հետ համապարփակ խաղաղության համաձայնագրի՝ հիմնված Մադրիդյան սկզբունքների վրա, որին և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի նախագահներն արդեն տվել են իրենց համաձայնությունը:

Ներկայիս ձախողումը մեծացնելու է Լեռնային Ղարաբաղի հայերի էթնիկ/կրոնական զտումների և Հայաստանի Հանրապետությունը «Արևմտյան Ադրբեջանի» վերածելու՝ նախագահ Ալիևի պաշտոնապես հայտարարված նկրտումների իրականացման վտանգը:

Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության վերականգնումը հայ ժողովրդին և միջազգային հանրությանը Ձեր խոստման կարևոր դրույթն էր, երբ Դուք ստանձնեցիք վարչապետի պաշտոնը 2018 թվականին: Ադրբեջանի հետ Ձեր կողմից ստորագրված ցանկացած պայմանագրի վավերացման համար հանրաքվեն կլինի այդ խոստման հաստատումը:

Միջազգային քրիստոնեական համերաշխությունն աջակցել է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքին և մարդասիրական օգնություն է տրամադրել ադրբեջանական ագրեսիայի զոհերին՝ սկսած Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմի մութ օրերից: Արցախցի քաջարի խաղաղ բնակիչների հետ Ստեփանակերտի խոնավ ու ցուրտ նկուղում ապաստանելու անձնական հիշողությունը, երբ Ադրբեջանը Շուշիի իր ռազմական հենակետից «Գրադ» հրթիռներով հարվածներ էր հասցնում քաղաքին, հավերժ կմնա իմ սրտում և իմ մտքում:

ՄՔՀ-ն կշարունակի աջակցել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կունենան այն իրացնելու կամքն ու պատրաստակամությունը: Կոչ ենք անում Ձեզ՝ անել նույնը:

Հարգանքով՝

դոկտոր Ջոն Էիբներ
«Միջազգային քրիստոնեական
համերաշխություն»
կամզակերպության նախագահ

Christian Solidarity International (CSI)
International Headquarters, Zelglistrasse 64, 8122 Binz, ZH, Switzerland